

Մենեքերիմ ՄԵԼՔՈՆՅԱՆ

*Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԻ ՍՈՒԹ ԿԵՏԻ
ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՓՈՐՉ*

Նախապես նշենք, որ խոսքը վերաբերելու է Հ.Թումանյանի կողմից իշխանուհի Մ. Թումանյանին նվիրված ալբոմի, դրանում զետեղված Հ.Թումանյանի երեք բանաստեղծությունների ճակատագրի հարցին, որ առայժմ ասես մութով սքողված լինի բումանյանագիտության մեջ:

Այդ ալբոմի և երեք բանաստեղծությունների մասին միակ վկայությունը տեղ է գտել Մարիամ Թումանյանի հուշերում:¹

Իշխանուհի Մարիամ Թումանյանը /1870-1947/ ժամանակի այն սակավաթիվ կանանցից էր, եթե ոչ միակը, որ դեռ վաղ երիտասարդական տարիներից աննախադեպ եռանդուն հասարակական գործունեություն է ծավալել Թբիլիսիում: Իր մտերիմ բարեկամներից մեկին 1902թ. գրած նամակում Հ.Թումանյանը նշում է, թե Մարիամ Թումանյանը «նոր ծրագիրներ է կազմել: Տե՛ր աստված: Ես կարծում եմ այս ձմեռ նոր բաներ ենք տեսնելու. նա կանի, ես հավատում եմ: Չարմանալի կին է: Ափսոս նրան լավ չեն ճանաչում ...»:²

Մարիամ Թումանյանի հուշերում լայնախոհ, ազնիվ տիկնոջը հատուկ անկեղծությամբ նշվում է, որ 1892թ. ինքը ծանոթացել է Հ.Թումանյանի հետ, և իրենք շուտով կապվել են բուռն, բայց և ռոմանտիկական բարձրության վրա մնացած սիրո զգացումով:

«Մի ժամանակ, - գրում է Մարիամ Թումանյանը, - ընդունված էր ալբոմի մեջ բանաստեղծություններ գրել: Ես էլ խնդրեցի Թումանյանին, որ ինձ համար հատուկ մի բան հորինի»:³ Իշխանուհու խնդրանքը կատարվել է. Թումանյանը նրան ալբոմ է նվիրել՝ դրանում զետեղելով երեք բանաստեղծություն:

Շարունակելով իր խոսքն այդ ալբոմի մասին՝ իշխանուհին նշում է, թե մի շաբաթ չանցած՝ նոր բաներ գրելու պատրվակով Թումանյանը ետ է վերցրել այդ ալբոմը և այլևս չի վերադարձրել:⁴

Հ.Թումանյանի մահից հետո իշխանուհին խնդրել է բանաստեղծի դստերը՝ Նվարդ Թումանյանին, որին հանձնարարված է եղել կարգի բերել հոր արխիվը, գտնել այդ ալբոմը: Բայց «Նվարդը, - նշում է իշխանուհին, - որքան էլ փնտրեց, չկարողացավ գտնել: Այդ ժամանակ ես համոզվեցի, որ Թումանյանը ճիշտ որ **ոչնչացրել էր այն**, ինչպես ինքն ինձ ասաց մեր մի խոսակցության ժամանակ»:⁵

¹ Տե՛ս Հ.Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Եր., 1969, էջ 483:

² Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հ.9, Եր., 1997, էջ 302: Հաստորում այս էջերը խառնված են. 300-րդ էջից 7 էջ հետո է տեղ գտել 302-րդ էջը:

³ Հ. Թումանյանը ժամանակակիցների հուշերում, էջ 483:

⁴ Նույնը:

⁵ Նույնը /ընդգծումը մերն է - Ս.Մ./:

Հ. Թումանյանի կենսագրության, նրա քնարերգության ուսումնասիրությանը զբաղվող գրականագետներից ոչ մեկն առայժմ չի անդրադարձել այն հարցին, թե որոնք են այդ երեք բանաստեղծությունները: Նույնիսկ երախտավոր թումանյանագետ Ա.Ինճիկյանը, որ այնքան հանգամանորեն և ամենայն մանրամասնությամբ է ներկայացրել Թումանյանի կյանքի և ստեղծագործության պատմությունը, այդ երեք բանաստեղծություններին հպանցիկ ձևով է անդրադառնում: Նշելով իշխանուհու նկատմամբ Թումանյանի տածած սիրո մասին՝ Ա.Ինճիկյանը տողատակում ավելացնում է. «Այդ զգացմունքների արտահայտություն են եղել այն երեք բանաստեղծությունները, որ Թումանյանը մի ալբոմում գրած՝ նվիրել է Մարիամ Մարկովնային»:⁶

Ինչո՞վ բացատրել թումանյանագիտության այսպիսի անտարբեր վերաբերմունքն այդ երեք բանաստեղծության հարցի նկատմամբ, ինչո՞ւ որևէ մեկի մտքով չի անցել պատասխան գտնել այն հարցին, թե որոնք են այդ բանաստեղծությունները:

Պրպտումները, մտորումները մեզ հանգեցրել են այն համոզմանը, որ նման անտարբերության պատճառ են եղել մեկից ավելի հանգամանքներ: Նախ որ, ինչպես վերը տեսանք, իշխանուհին այդ երեք բանաստեղծությունների մասին շատ ընդհանուր ձևով է արտահայտվել՝ առանց որևէ ակնարկի դրանց բովանդակության, ծավալի, վերնագրի վերաբերյալ: Բայց մենք այն համոզմանն ենք, որ այդ բանաստեղծությունների հարցում ցուցաբերած անտարբերության ավելի գորեղ պատճառ կարող էր հանդիսացած լինել հետևյալ իրողությունը: Հավանական ենք համարում, որ իշխանուհու հուշերից վերը բերված տողերում մեր կողմից ընդգծված «... ոչնչացրել էր այն» արտահայտությունը ճիշտ չի հասկացվել ընթերցողի կողմից, այդ արտահայտությունն այնպես է ընկալվել, թե իբր ալբոմը այդ երեք բանաստեղծություններով հանդերձ է ոչնչացվել: Մեր համոզմամբ «*ոչնչացրել էր*» արտահայտությունն այնպես պիտի հասկանալ, որ ալբոմը որպես այդպիսին, վերացվել է, այլև գոյություն չունի, չկա: Այդպես կարող էր ստացվել այդ երեք բանաստեղծությունների զբաղեցրած էջերը ալբոմից հանելով, առանձնացնելով /ալբոմում միայն այդ երեք բանաստեղծությունն է տեղ գտած եղել/: Ինչպես ստորև կտեսնենք, մեր կողմից որպես ուշադրության առարկա հանդիսացող այդ երեք բանաստեղծությունների առանձնացված ձեռագրերը հետագայում զետեղված են եղել Թումանյանի *ծոցանետքերում*. բանաստեղծին հուզողը իշխանուհուն իր նվիրած ալբոմը և ոչ թե նաև դրանում գրած բանաստեղծությունները մեջտեղից վերացնելն է եղել: Կարծում ենք նման մտահոգության պատճառն ինքնըստինքյան հասկանալի է: Պարզագույն ձևով ասած՝ բանաստեղծը բնականաբար նպատակահարմար չպիտի գտած լիներ իշխանուհուն նվիրած ալբոմում «հրապարակորեն» հանդես գալ որպես նրան սիրահարված անձնավորություն: Իշխանուհու կտրուկ խնդրանքի հետևանքով⁷ այդպիսի բանաստեղծություն գրվել է, բայց, ինչպես կտեսնենք, ուշագրավն այն է, որ ոչ թե գրելուց մեկ շաբաթ հետո, այլ գրելու պահին էլ բանաստեղծին անխուսափելի է թվացել ալբոմից դրա վերացման անհրաժեշտությունը:

Հիմա ամենևին էլ ոչ երկրորդական մի հարցի մասին. ե՞րբ են գրվել այդ բանաստեղծությունները, ալբոմը ե՞րբ է երևան եկել: Ինչպես կարելի է զգալ իշխանուհու հուշերի համապատասխան տողերից՝ ալբոմը երեք բանաստեղծություններով պիտի երևան եկած լինի իշխանուհու և Թումանյանի առաջին ծանոթության /1892թ./ սկզբի տարիներին:

⁶ Ինճիկյան Ա., Հովհաննես Թումանյան. կյանքի և ստեղծագործության պատմություն, Եր., 1969, էջ 421:

⁷ Տես իշխանուհուց վերը բերած տողերում՝ «...ինձ համար հատուկ մի բան հորինի»:

Մենք այն համոզմանն ենք, որ իշխանուհու այրումում Թումանյանի գրած բանաստեղծություններից մեկը՝ հենց առաջինը, հետևյալն է.

Այս տողերը գուցե ջնջվեն,
Գուցե կորչի հուշագիրը,
Բայց ինձ համար դրանք ցավ չեն,
Ոչ էլ այդ է իմ խնդիրը:
Ես քեզանից ուրիշ անանց
Մի հիշատակ եմ խնդրում,
Թող կենդանի մնամ պահված
Մտքիդ պայծառ հուշերում:

Որպես անկեղծ մի բարեկամ,
Որ կարող էր այդ խնդրել,
Որ խոսքերից հազար անգամ
Ավելի է քեզ սիրել:⁸

Այս բանաստեղծությունը գրված է եղել 1894թ., բանաստեղծի կենդանության օրոք չի տպագրվել և գետնից է եղել բանաստեղծի ծոցատետրերից մեկում:⁹ Այս բանաստեղծությանը վերաբերող ծանոթագրության մեջ նշված է. «Հնարավոր չեղավ պարզել, թե ում է ուղղված»:¹⁰

Նախքան ում ուղղված լինելու հարցին անդրադառնալը ուշադրության արժանացնենք երկու հանգամանք՝ նախ որ բանաստեղծությունը այրումային բնույթի է, և ապա՝ բանաստեղծության սկզբի տողերում ակնհայտ ակնարկ կա գրվածի ջնջվելու, մեջտեղից վերացվելու մասին: Եվ դա բանաստեղծի համար ցավ պատճառող իրողություն չի համարվել: Նրան հուզողն այն է եղել, որ այրումի տիրոջը ներկայանա իր սրտի ոչ այնքան թաքնված գաղտնիքով՝ որպես նրան պաշտամունք դարձրած «անկեղծ բարեկամ»:¹¹ Կարծում են՝ ինձ հետ համամիտ կլինեն Թումանյանի անձնական կյանքին քաջատեղյակները, որ նա միայն իշխանուհի Մ. Թումանյանին կարող էր այսպիսի տողեր նվիրել՝ ընդգծելով, որ «խոսքից հազար անգամ ավելի» են քեզ սիրել: Հայտնի է, որ փոխադարձ այդպիսի սիրո խոստովանություն կա նաև Թումանյանի և իշխանուհու մասնակցությամբ, իշխանուհու հուշերում:¹²

Մյուս բանաստեղծությունը, որ մեր համոզմամբ գրված է եղել Մ. Թումանյանի այրումում, սա է՝ «Այդպիսի աչքեր ես դեռ չեմ տեսել»:¹³ Այս բանաստեղծությունն էլ առաջին անգամ տպագրվել է բանաստեղծի մահվանից հետո՝ 1972 թվականին, այսպիսի ուշագրավ ծանոթագրությամբ. «Հանված է Թումանյանի 90-ական թվականների մի ծոցատետրից»:¹⁴ Ա.Ինճիկյանի կարծիքով այս բանաստեղծությունը գրված է 1893 թվականին: Ուշադրություն դարձնենք մեր կողմից ընդգծված բառին, որ հուշում է,

⁸ Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, Եր., 1988, հ.1, էջ 353:

⁹ Նույն տեղում, էջ 651 /ընդգծումը մերն է - Ս.Ս./:

¹⁰ Նույնը:

¹¹ Ի դեպ՝ Թումանյանը իշխանուհուն ներկայանում է **բարեկամ** բառով նաև նրան ուղարկած բացիկում. «Թափառելով Բորժում պարկում Հիշում է Չեզ և ուղարկում շատ բարևներ ու սեր անկեղծ Չեր **բարեկամ** մի բանաստեղծ» /հ.1, էջ 392/:

¹² Տե՛ս մասնավորապես «Թումանյանը ժամանակակիցների հուշերում», էջեր 483-486:

¹³ Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հ.1, էջ 350:

¹⁴ Ինճիկյան Ա., Անտիպ էջեր Թումանյանի գրական ժառանգությունից /Բանբեր Երևանի համալսարանի, Եր., 1972, ք.1, էջ 151: Ընդգծումը մերն է - Ս.Ս./:

թե բանաստեղծությունը ոչ թե *գրված է եղել*, այլ *գետեղված է եղել* այդտեղ՝ ծոցատետրում: Մխարվա՞ծ կլինենք, եթե այնպես մտածենք, որ այդ բանաստեղծությունը գրված է եղել մեկ այլ տեղ, կասկած չունենք՝ իշխանուհու ալբոմում, իսկ հետո, երբ այդ ալբոմը Թումանյանը վերացրել է, դրա այն էջը, որի վրա գրված է եղել բանաստեղծությունը, գետեղվել է ծոցատետրում: Այդ բանաստեղծությունը նվիրված է հեղինակի «սրտի տիրուհուն», որի հմայքը, գեղեցկությունը, հատկապես աչքերը բանաստեղծի հանգիստը խլել են իրենից.

Ո՞հ, այդ աչքերին ով որ պատահի,
Տեր Աստված նրա սիրտը թող պահի,
Այդ քո սպանող գեղեցկությունից
Որ իմ հանգիստը խլեց ինձանից:¹⁵

Կարծում ենք՝ այս տողերում կետադրական անճշտություն կա. երկրորդ տողից հետո եղած ստորակետը պիտի դրված լիներ երրորդ տողից հետո:

Ուշադրության առարկա բանաստեղծությունից վկայակոչենք մաև երկու տող, որի բովանդակությունը հետագայում բանաստեղծը վերաբծարծել է իշխանուհու հետ ունեցած մտերմիկ գրույցի ժամանակ: Ահա այդ երկու տողը.

Այդ աչքերն արդյոք ո՞վ է տվել քեզ,
Եվ հետը մի սիրտ ամուր քարի պես ...

Տեսնենք, թե ինչ իմաստով պիտի հասկանալ երկրորդ տողի բովանդակությունը, սիրած էակի սրտի ամուր քարի պես լինելու մասին ակնարկը: Այս կապակցությամբ շատ կարևոր է իշխանուհու հուշերում տեղ գտած այն վկայությունը, ըստ որի 90-ական թվականներից շատ տարիներ անց՝ 1908թ. Թումանյանը խոստովանել է, որ ինքը «վաղուց սիրահարված է եղել մի տիկնոջ» (ակնարկում է հենց իրեն՝ իշխանուհուն), որը ժամանակին այնքան էլ որոշակիորեն համապատասխան վերաբերմունք չի ցուցաբերել:¹⁶ Այս կապակցությամբ իշխանուհին հաջորդ տողերում գրում է. «Անկեղծ ասած՝ երբեք մտքովս չէր անցնում, որ Թումանյանը կարող էր սիրահարված լինել ինձ», բացի «Փնքուշ բարեկամությունից ուրիշ զգացմունք չէի կարող երևակայել»: Եթե 10-11 տարեկան հասակում իր ուսուցչուհուն սիրահարված Թումանյանին տարօրինակ է թվացել «սերը սրտում դաս սերտելու» իրողության դատապարտելի համարելը («Հոգուս հատոր» բանաստեղծությունը), ապա 23-24 տարեկան Թումանյանին իհարկե *քարսրտություն* պիտի թվար պաշտելի կնոջ կողմից ընդամենը «Փնքուշ բարեկամական» զգացմունքի ցուցաբերումը:

Կարծում ենք՝ հետաքրքրության առարկա հանդիսացող երրորդ բանաստեղծությունն էլ սա է.

Եթե գիտենաս իմ ցավը, հոգիս,
Եթե գիտենաս ինչու եմ տխուր,
Կգովես անշուշտ կսկիծը սրտիս
Եվ ինձ քո սրտին կըսեղմես ամուր:¹⁷

Այս բանաստեղծությանը վերաբերող ծանոթագրությունում էլ նշված է, որ դրա ձեռագիրն էլ պահված է եղել ծոցատետրում և գրված պիտի լիներ 1891-1892 թվականներին /հ.1, էջ 648/:

Ինչպես իր հուշերում Մ. Թումանյանն է նշում, Թումանյանի հետ ծանոթանալու առաջին իսկ օրերից չի կարողացել «անտարբեր վերաբերվել նրա անձնավու-

¹⁵ Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հ.1, էջ 350:

¹⁶ Հ. Թումանյանը ժամանակակիցների հուշերում, էջ 484:

¹⁷ Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հ.1, էջ 344:

րությամբ», հետաքրքրվել է նրա անձնական, տնտեսական, հոգեկան վիճակով: Արձագանքելով այդպիսի հետաքրքրությամբ և «տեղայնացնելով» իրողությունը՝ բանաստեղծն այս քառատողում շեշտը դրել է իր սրտի բաղձանքի վրա: Ուշագրավ է, որ քառատողի ձեռագրի վերջին տողում մախապես եղած *կործք* բառը փոխարինվել է *սիրտ* բառով՝ «Եվ ինձ քո *կրծքին/սրտին* կըսեղմես ամուր» /հ.1, էջեր 344, 497/: Կարծում ենք՝ փոփոխության մպատակը եղել է հոգեկան կարոտի, տենչանքի ընդգծումը:

Որպես անփոփում նշենք, որ իշխանուհի Մ. Թումանյանին նվիրված այբոմում Թումանյանի զետեղած երեք բանաստեղծությունները ոչ թե հետագայում ոչնչացվել են, այլ պահպանվել են այդ այբոմը վերացնելուց հետո էլ: Հրապարակման մեջ առաջին անգամ պատասխան է տրվում այն հարցին, թե որոնք են եղել այդ երեք բանաստեղծությունները, և դրանք ինչ դեր են ունեցել Թումանյանի 90-ական թվականների սկզբի տարիներին ունեցած հոգեկան վիճակի դրսևորման գործում:

ПОПЫТКА ПРОЯСНЕНИЯ ОДНОЙ ТЕМНОЙ СТРАНИЦЫ ЛИРИКИ О.ТУМАНЯНА

___ *Резюме* ___

___ *С. Мелконян* ___

В альбоме, посвященной Мариам Туманян, находились три стихотворения О.Туманяна, которые не исчезли и после потери альбома. В публикации впервые дается ответ на вопрос относительно уточнения этих стихов и их роли в проявлении душевного состояния Туманяна в начала 1890-х годов.